ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտմբրի 9-ի հ.345-Ն որոշումը `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ «Միկա Քորփորեյշն» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 24.01.2008թ. հ.2483695 վկայական) Երևանի Թբիլիսյան խճուղի հ.15/2 հասցեում գտնվող 600.0քմ մակերեսով հողամասի 238.73քմ մակերեսով հողամասը հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 238.73քմ /202.38քմ+36.35քմ/ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է «Միկա Քորփորեյշն» ՓԲԸ-ին Թբիլիսյան խճուղի հ.15/2հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող հարակից հողամասի հետ:

Նշված հասցեում «Միկա Քորփորեյշն» ՓԲԸ-ին պատկանող 600.0քմ մակերեսով հողամասից 238.73քմ մակերեսով հողամասը բարդ ռելիեֆի պատճառով հնարավոր չէ օգտագործել, ինչի պարագայում այն փաստացի դարձել է անօգտագործելի, չի ծառայում իր նպատակային նշանակությանը և ընկերությունը զրկված է իրեն տրամադրված 600.0քմ մակերեսով հողամասը լիարժեք օգտագործելու հնարավորությունից, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել կատարելու հողամասերի փոխանակություն:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով <<Միկա Քորփորեյշն>> ՓԲԸ-ին առաջարկվել է սեփականության իրավունքով պատկանող 600.0քմ մակերեսով հողամասից 238.73քմ մակերեսով /202.38քմ+36.35քմ/ հողամասը փոխանակել հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 238.73քմ մակերեսով համարժեք հողամասի հետ (ծածկագիր 01-003-409-097, տող՝ 43607):

Քննարկվող հողամասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 7-րդ գոտում:

<<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է քննարկվող հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ